ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

13.05.2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի ՎՏ վարչության պետ Լ. Խաչատրյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,
ՀՀ ՊՆ աշխատակազմի ՎՏ վարչության հրատարակչական բաժնի պետի տեղակալ Ա. Մուրադյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.
2. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Լիմուշ» ՍՊԸ-ի, «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի, «Տրանզիտ Պրո» ՍՊԸ-ի, «Փենբոքս» ՍՊԸ-ի և «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝ «Փենբոքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 6.1-ում բացակայում են 8, 11, 19 և 51 չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, «Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 6.1-ով ներկայացված 39-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չէ մետաղալարե կապի «N 3-1m» չափորոշիչը և ֆիրմային նշանի դաջվածքի մասին տեղեկությունը, ինչպես նաև 46-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «0,5 և 0,7 մմ», այնինչ Հրավերով պահանջվել է միայն «0,7 մմ», «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից Հավելված 6.1-ով ներկայացված 77-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 82-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված չեն մատակարարման ժամանակ արտադրողի կողմից փաստաթղթերի ներկայացման մասին տեղեկությունները, «Տրանզիտ Պրո» ՍՊԸ-ի կողմից Հավելված 6.1-ով ներկայացված առաջարկվող ապրանքի անվանումն անհասկանալի է, անհրաժեշտ է հստակեցնել այն, ինչպես նաև Հավելված 6.1-ով ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «Գրասենյակային կարիչ, մետաղալարե կապեր բլոկով», այնինչ Հրավերով պահանջվել է «Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով» և նշված չէ առանց դեֆորմացման կարելու մասին տեղեկությունը, «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն ընդհանրապես չի ներկայացրել, ուստի, գնահատող հանձնաժողովը 14.05.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, կասեցրել է նիստը և «Փենբոքս» ՍՊԸ-ին, «Լիմուշ» ՍՊԸ-ին, «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին, «Տրանզիտ Պրո» ՍՊԸ-ին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում «Լիմուշ» ՍՊԸ-ն, «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն և «Տրանզիտ Պրո» ՍՊԸ-ն շտկել են արձանագրված անհամապատասխանությունները: «Փենբոքս» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովը 16.05.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը, մերժել է 8, 11, 19 և 51 չափաբաժինների մասով «Փենբոքս» ՍՊԸ-ի ներկայացված հայտը, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետը՝ մերժել է «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Գ. Գևորգյան)

Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով գնման ընթացակարգի 19-րդ չափաբաժնին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետը, 16.05.2019թ. «ՍԱՔԻ» ՍՊԸ-ին ծանուցվել է, որ գների նվազեցման նպատակով 21.05.2019թ. ժամը 12:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) նշանակված են բանակցություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Գևորգյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել բանակցությունների անցկացման օրը, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող	Հ. Մելիքյան
Գնահատող	Լ. Խաչատրյան
Գնահատող	Գ. Ուստյան
Գնահատող	Ա. Մուրադյան
Գնումները համակարգող	Գ. Գևորգյան